

Ջրոսաշրջության և հյուրընկալման աշխատանքների դասակարգումը Հայաստանում

Ջրոսաշրջության արդյունաբերության ոլորտում և կրթական հաստատություններում իրականացված հմտությունների և գիտելիքների կարիքների գնահատումը մատնանշում դրանց ճեղքերն ու անհամապատասխանությունները, որոնք առկա են ներկայիս և կայացած զբոսաշրջության արդյունաբերության մեջ: Այն անդրադառնում է նաև այն գիտելիքներին, հմտություններին ու որակներին, որոնք անհրաժեշտ են պրոֆեսորա-դասախոսական կազմին: Ջրոսաշրջության ոլորտի որակյալ մասնագետներ ձևավորելու նպատակով՝ այս գնահատման արդյունքներն օգտագործվել են միջազգային պահանջներին համապատասխան աշխատանքի նկարագրեր կազմելու համար՝ նախատեսված տեղական զբոսաշրջության համար:

Հայաստանում զբոսաշրջության և հյուրընկալման աշխատանքների այս դասակարգումը հիմնված է արդյունաբերության մեջ առկա հիմնական հատվածների և դրանց ակնհայտ կարիքների վրա: «Մրցունակ Մասնավոր Հատված Հայաստանում» ծրագիրն իրականացրել է այս հետազոտությունը 2007 թ. դեկտեմբեր ամսին և վերանայել այն 2008 թ. փետրվարին:

Դասակարգման նպատակն է ներկայացնել հաստիքներին բնորոշ կոնկրետ պարտականություններն ու առաջադրանքները՝ համաձայն միջազգային հաջողված փորձի: Անգլերեն և հայերեն լեզուներով ներկայացված աշխատանքների դասակարգումը նախատեսված է զբոսաշրջության և հյուրընկալման ոլորտի ընկերությունների համար: